ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՓԵՏՐՎԱՐԻ 2025թվականի N 62-Ա

ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ ՄԱՇՏՈՑԻ ՓՈՂ. ՏՈՒՆ 13 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՈՒՐԵՆ ԲՈՒՂԴԱՆԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 26.12.2002 թվականի N 510-Ն՝ «Իրավունքը հաստատող փաստաթղթերի չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, ՀՀ 2008 թվականի հունիսի 10-ի ՀՕ-117-րդ հոդվածով, ՀՀ «Հողային օրենսգրքի» 2010 թվականի ապրիլի 27-ի N 50-Ն օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի ապրիլի 7-ի թիվ 719-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Ճամբարակ համայնքի Ճամբարակ քաղաքի Մաշտոցի փող., տուն 13 հասցեում գտնվող շենք-շինության կառուցման և սպասարկման համար հատկացված 0.25 հա հողամասին կից 0.03 հա հողամասը իրեն տրամադրելու և մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության շինություններն օրինական ճանաչելու մասին, ինչպես նաև նկատի ունենալով, որ դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Սուրեն Գաբրիելյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը բավարարում է Հայաստանի Հանրապետության ՀՕ-117 ընդունված 10.06.2008թ., 26.12.2002թ. թիվ 510-Ն որոշմամբ իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների և ՀՀ ՀՕ 64 հոդվածի 1-ին կետի պահանջներին:
2. Սուրեն Բուղդանի Գաբրիելյանին՝ ծնված 15.10.1964թ. սեփականության իրավունքով հատկացվել է 0.25 հա տնամերձ հողամաս, սակայն փաստացի օգտագործվում է 0.28 հա: Հողամասի վրա 1975թվականին կառուցված մեկ հարկանի 42.8 քմ ներքին մակերեսով նկուղային հարկը, 52.44քմ ներքին մակերեսով բնակելի տան 1-ին հարկը, 30.08քմ մակերեսով բաց պատշգամբը,30.08քմ մակերեսով 2-րդ բաց պատշգամբը,3.3քմ մակերեսով աստիճանը,28.0քմ ներքին մակերեսով անասնաշենքը և 30.51քմ ներքին մակերեսով 2-րդ անասնաշենքը, որոնք կառուցված չեն ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասի վրա, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ՝ ճանաչել Սուրեն Գաբրիելյանի սեփական գույք:
3. Համայնքի կողմից Սուրեն Բուղդանի Գաբրիելյանին սեփականության իրավունքով հատկացված 0.28 հա հողամասը չի գտնվում ՀՕ 60-րդ հոդվածի ցանկում և

բավարարում է ՀՕ 64-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներին,իսկ 0.08հա հողամասը թողնել որպես համայնքային սեփականություն:

4. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար **ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ**

20 __ թ. _____
ք.Ճամբարակ